

բայց այս խաչը ետքը վերցուեցաւ :  
 Այդ շենքը Ի՞ստուծոյ պաշտամանը  
 տաճար մը ըլլալու համար կը շինուէր .  
 և անոր համար բոլոր ներսի ու գրսի  
 զարդերը քանդակագործ գրուագները՝  
 քրիստոնէական կրօնից վսեմտեսարան  
 ները կը ներկայացընէին, և Ո՞վվէսի ,  
 Ահարոնի , Յեսուայ , Դաւթի և այլն  
 կենաց գիպուածները կը պատմէին :  
 Բայց Գաղղիոյ ( Օրինադիր ժողովքը ,  
 որ ամենայն բարեկարգութեան հետ  
 կրօնքն ալ վերուց , 1791 տարւոյն փո-  
 խեց Արքուհի Ժանըվիեւը ու գերեզ-  
 մանատուն ըրաւ այն երեւելի ազգայ-  
 նոց , որոնք կամ իրենց հանձարովը ,  
 կամ բարելաւութեամբը և կամ ի-  
 րենց ըրած ծառայութիւններովը բա-  
 րերար եղած էին հայրենեաց : Իսով  
 Արքուհի Ժանըվիեւ եկեղեցին անունը  
 փոխեց ու Պանթէռն Գաղղիական ըսուե-  
 ցաւ . բնականապէս այն ամէն բաներն  
 ալ վերցուեցան , որոնք կրօնից նշաններ  
 էին ու շինուածքին եկեղեցի ըլլալը կը  
 ցուցընէին : Աւ շենքին եռանկիւնի Ճա-  
 կատին վրայ այս պարզ վերտառու-  
 թիւնս զրոշմել տուին . Արանց ահանա-  
 ռուաց երախտագէտ հայրէնիք : Աերքին  
 կողմը ազատութեան ու նոյն ատենուան  
 հասարակաց բարոյականին նշանները  
 սկսան դուրս ցատքել . ամէն կողմ այլա-  
 բանութիւններու տակ՝ մնարդուս իրա-  
 ւունքները , օրինաց կարողութիւնը ,  
 հայրենասիրական անձնանուիրութիւ-  
 նը և ազգին զօրութիւնը կը ներկայա-  
 նային : Պանթէռնին մէջ թագուելու  
 առաջին պատիւ ունեցողն եղաւ Արտա-  
 պոյ մեծ Ճարտասանը . Հոս թագուեցան  
 Յովհ . Յակոբ Առուսոյ ու Աղջէր  
 ալ , հոս նաև Արայի պէս գազանա-  
 սիրտ մարդը , որ անարգանք ըրաւ այդ  
 տեղւոյն : Աարոլէսն իր կայսերութեան  
 ժամանակ՝ հրամայեց որ Պանթէռնը  
 գարձեալ եկեղեցի փոխուի , միանգա-  
 մայն երեւելի արանց գերեզմանատեղի  
 ալ ըլլալով : Իսով հոս թագուելու ար-  
 ժանացան Անդէպէլլոյի դուքս Ա ան  
 մարտախտաը , Ա ակրանք մեծ երկրա-  
 չափը , Պուկէնվիլ երեւելի Ճանապար-

հորդը , և ուրիշ շատ հաշակաւոր ան-  
 ձինքներ : Պուրապոնեանց վերադարձին  
 ժամանակ՝ վերոյիշեալ վերտառութիւ-  
 նը վերուցին , և անոր տեղ հետեւեալ  
 վերտառութիւնը դրին . Ասպոնծոյ բարուց  
 և Նեծի ընդ պանութեամբ Սրբուհուոյն  
 Գևուականայ Լուրդովիկոս մեջ հնեաց , Լո-  
 ռովիկոս մեջ Վերադարձոց : 1830 տարւոյն  
 յուլիսի իրեք օրուան խռովութենէն  
 վերջը առջի վերտառութիւնը նորէն  
 դրուեցաւ , ու ինչուան ետքի ժամա-  
 նակներս երեւելի արանց գերեզմանա-  
 տուն էր . բայց Ա ուգովիկոս Աարոլէսն  
 Գաղղիոյ հիմակուան կայսրը հրամայեց  
 որ գարձեալ Աստուծոյ պաշտամանը  
 ընծայուի այդ շենքը :

## ՄԱՆՐԱՎԵՐ

Հարատարմորիւնը անվարձ չմնար :

Աարգարիտա Ա ալուացի թագութիւն  
 իր հենրիկոս Գ. եղօրը , ու իր երկա-  
 նը Աաւարրայի թագաւորին գէմ պա-  
 տերազմբացեր էր : Ասիկայ անգամ մը  
 իր պղտի բանակը Ա ինէօվ տ' Ա ժան  
 ըսուած քաղաքին դիմոց դրած կը կե-  
 նար . դիպուածով նոյն տեղւոյն քաղա-  
 քապետին հայրը , որ Աարոլս տը  
 Աիկօգա կ' ըսուէր , իր բանակին մէջ  
 կը գտնուէր . Աարգարիտա այս բանս  
 իմանալով՝ հրամայեց քսան երաւնն զի-  
 նուորի մը որ առնեն տանին զանիկայ  
 քաղաքին պարիսպներուն տակը , և թէ  
 որ տղան քաղաքին դռները բանալ  
 չտայ՝ հոնտեղը սպաննեն : Օ ինուոր-  
 ները այս անգութ առաջարկութիւնն  
 ըրին Աիկօգայի տղուն . բայց հայըը  
 մէկէն ձայնը բարձրացուց ու կանչեց ի-  
 րեն օրդւոյն . Ա տածէ , որդեակ իմ ,  
 թէ գաղղիայի մը ինչ հաւատարմութի  
 պիտի ունենայ ու ինչ պարտք ունի . և  
 թէ որ ես ըսած ըլլայի քեզի որ անձնա-  
 տուր ըլլաս , այդ խօսքն ըստով քու  
 հայրդ չէր ըլլար , հապա մատնիչ մը ,  
 վատ մարդ մը , և թշնամի քու՝ ու քու  
 թագաւորիդ պատուցին „ : Օ ինուոր-

Ները ձեռութնին երկնցուցին՝ որ իջեցը-նեն սուրերը Ախէօդայի գլուխը • բայց տղան մէկէն նշան տուաւ իրենց ու կեցուց : Ի՞անալ տուաւ դռները . ու կեղծելով որ հաշտութիւն պիտի խօսի հետերնին՝ իրեք չորս հոգւով դուրս ելաւ . ելածին պէս մէկէն ձեռքը սուրին դրաւ , կատաղութեամբ մը վազեց անոնց վրայ , որ իրեն հօրը գլխուն՝ մերկ մերկ սուրերը կը շողացընէին , և

անանկ փայլակի պէս սկսաւ հարուած-ներ խաղընել , որ վերէն պահապան զօրքերէն շատին ոգին բռնկեցաւ ու նոյնպիսի արագութեամբ գահավիժա-բար իրեն օգնութեան հասան : Ախէօ-դայի հետ եկող զինուորներէն և աչ մէկ մը կենդանի մնաց , և ինքը որդւոյն հետ միատեղ փառօք ու անպատմելի ուրա-խութեամբ քաղաքը մտաւ :

## Ժ Ա. Մ Ա Ն Ա. Կ Ա Խ Օ Դ Ե Կ Պ Բ

Հիմակուան Արևելեան պատերազմը : ( Տես երև 286 )

### Ա Յ Ֆ Ֆ

#### ՅՈՒՆՈՒԱՐ

4. Արևմտեան տէրութեանց դաշնակից նաւա-տորմիզները Վասփորը կը թողուն ու Սկ ծով երթալու ճամբայ կ'ելլէն . բայց Գաղղիոյ ու Անդղիոյ գեսպանները առաջուցմէ Սեւաս-դորով ուսւ նաւատորմիզն հրամայող ծո-վակալին կը ծանուցանեն որ այս շարժմունքը Օսմաննեան տէրութե ծովեզերեայ ափունքն ու նաւահանդիսոնները ընդդէմամենայն յար-ձակման պաշտպաննելու համար է : Այս ծա-նուցումը այն վախճանաւ կ'ընեն՝ որ ու և ից նաւական կուռոյ առջևն առնեն , և ցուցը-նեն որ խալադունիւնը դոհելու համար միայն նաւատորմիզները Սկ ծով կը մտնեն :
5. Տրուէն ուղ Լիփի այդ ծանուցագիրը կը խաւ-րէ Լոնսրա Վալեւաքի կոմին . Կոստան-դնուպուայ դաշնագրական խօսակցութիւն-ները Վեննայի դաշնագրական խօսակցու-թիւններուն հետ միացընելու համար՝ Գաղ-ղիոյ արտաքին գործոց պաշտօնեայն կ'առա-ջարկէ որ Շէշիտ փաշային պատասխանը Վեն-նա հասնելուն պէս՝ անմիջապէս այս քաղա-քիս մէջ արձանագրութիւն մը շինուի , որուն մէջ այդ հետևեալներս պարունակուին . Ա. որ Վեննայի խորհրդակցութիւնը Շէշիտ փա-շային պատասխանը առաւ . Բ. այս պա-տասխանը համաձայն է բարձրագոյն պե-տութեանց տեսութիւններուն . Գ. պէտք է անիկայ Բեդրագուրկ իսաւրել՝ իրբն հիմունք մը առաջարկելով Դրան ու Ռուսաստանի մէջ խաղաղութիւնը նորէն հասատուելուն :
6. Զէդանէի քով ( ի Փոքրիկն Վալաքիա ) պա-տերազմ կ'ըլլայ : Ռուսերը , որոնց գլուխ էր Անրէք տեղակալ զօրապետը , Սէլիմ փաշային

- զօրքերուն յարձակմունքը կը մերժեն , և կը բանագատեն զջամիկները որ Գալաֆադիքու-վերն ունեցած իրենց պատնէները քաշուուին՝ վեց թուգանոթ աւար թողով : Ամսուն 7,8 , և 9 օրերուն պատերազմի գարձեալ կը շա-րունակէ . մասնաւորապէս 8ին սաստիկ ու-արիւնահեղ կուի կ'ըլլայ . Ռուսերը շատ թնդանոթ կը կորսնցընեն , ու Տաճիկները Զէդանէի կը ափիրեն . 10ին Ռուսերը Ռատո-վան կը քաշուին . իսկ Տաճիկները պատե-րազմի դաշտին կը ափիրեն :
7. Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնեայն հե-տևակալ զրջարեւականը կը խաւրէ Կայսեր՝ Գերմանիոյ Դաշնակցութեան արքունիքնե-րը ունեցած գործակալներուն . Հիմակուան ելած խնդրոյն մէջ՝ Գաղղիա Եւրոպայի հա-ւասարակշռութիւնը միայն կը մտածէ : Թէ որ աշխարհակալութեան փափաքով վա-ռուած ըլլար , Կայսերական կառավարու-թիւնը կրնար ուրիշ դաշնակիցներ գտնել , և իր արեւելք Ընելիքներուն հատուցումը ուրիշ տեղէն ձեռք ձգել : Այս պատճառներուս համար կը հրաւիրենք զԳերմանիա որ Գաղ-ղիոյ հետ միանայ , և օդնէ անոր հասատ-տուն գործունէութեամբ մը , պատերազմի խափանէ , և հաստատէ այն կարգն որ հազիւ դրուեցաւ :
13. Վեննայի խորհրդակցութիւնը այս արձանա-գրութիւնը կ'ընէ . Չորս մեծագոյն տէրու-թեանց երեսփոխանները՝ խորհրդակցութե վերջին առաջարկութիւններուն ( Տես 31 գեկտ . 1853 ) Շէշիտ փաշային տուած պա-տասխանին հանեցան , և որոշեցին Բեդր-պուրկ խաւրելու զանիկայ . ( Տես 16 ) :
- Սէմուր , Մէծին Բրիտանիոյ Բեդրպուրկի գեսպանը , պաշտօնագիր մը կը խրկէ Գլարէն-արըն կոմին այն ծանօթ աւթիւններուն փայօք . զորոնք ինքը բերնով հաղորդեց Ռուսաց կայ-սերութեան ատենագլուխի Նեսսելըոտ կոմ-սին՝ գաշնակից նաւատորմիզներուն Սկ ծով մտնելուն առթովք . ( Տես 27 գեկտ . 1853 ) .